



# Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ԱՄՅՐ ԵՒ ԿԵՂԵՅԻ



### ԽԱՉԿԵՐԱԾԷԱ ԵՏԲ ՉՈՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

11 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020

Կիրակնօրեայ Ընթերցումներ	էջ 1
Ծանուցումներ	էջ 2

կոչուած խորհրդականները, որոնք յիմար խորհուրդներ կու տան:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ  
ՆԱՄԱԿԷՆ  
(2.1-10)**

#### ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳՐՔԷՆ (19.1-11)

Ահա Տէրը թեթեւազնաց ամպի վրայ նստած եգիպտոս պիտի գայ: Անոր դիմաց եգիպտոսի կուռքերը պիտի դողան, եգիպտացիներու սիրտը պիտի հալի: Եգիպտացիները եգիպտացիներուն դէմ պիտի ելլեն, եղբայրը եղբօր դէմ պիտի պատերազմի եւ ընկերը՝ իր ընկերոջ դէմ, քաղաքը քաղաքի դէմ եւ թագաւորներ թագաւորներու դէմ: Եգիպտացիներ իրենց հոգեկան կորովը պիտի կորսնցնեն, որովհետեւ անոնց ծրագիրները պիտի խառնեն, ուստի անոնք խորհուրդ պիտի ուզեն իրենց աստուածներէն ու կուռքերէն, ոգեհարցներէն ու վհուկներէն: Խնտասիրտ տէրերու ձեռքը պիտի մատնեն գիրենք, անգութ թագաւորներ պիտի տիրեն անոնց, - կ'ըսէ Երկնային Զօրքերու Տէրը: Եգիպտացիներ գետափեայ ջրակոյտերէն պիտի խմեն իրենց ջուրը, որովհետեւ Նեղոսը պիտի նուազի ու ցամքի: Նեղոսէն բացուած առուները պիտի ճահճանան եւ ամբողջ գետը պիտի ցամքի. բոլոր մարգագետինները, եղէգնուտներն ու պրտուի շամբուտները եւ մամուռով պատուած մարգագետինները պիտի չորնան: Նեղոսի շուրջը աճած ամէն կանաչութիւն, եւ գետեզրին մշակուած բոլոր արտերը խորշակահար պիտի չորնան: Նեղոսի ձկնորսներն ու բոլոր կարթընկէցները պիտի տրտմին ու հեծեն, ցանցորդներն ու ուռկանաւորները սուգ պիտի ընեն: Նրբահիւս կտաւագործները ու բեհեզ գործողները պիտի անճրկին, բոլոր վարպետ արհեստաւորները եւ գարեջրագործները պիտի տրտմին եւ յուսալքուին: Արդարեւ յիմար են Տայանիսի իշխանները, փարաւոնին իմաստուն

Այնուհետեւ, տասնըչորս տարի ետք կրկին Երուսաղէմ գացի Բառնաբասին հետ, Տիտոսն ալ միասին առնելով: Գացի, որովհետեւ Աստուած յայտնեց որ երթամ: Այնտեղ Երուսաղէմի եկեղեցիին զեկոյց տուի հեթանոսներուն մէջ կատարած քարոզութեանս մասին: Առանձնաբար զեկոյց տուի նաեւ եկեղեցւոյ ղեկավարներուն, որպէսզի իմ ուղղութեանս մասին իրենց հաւանութիւնը ունենամ, եւ զուր տեղ աշխատած չըլլամ եւ չաշխատիմ: Անոնք բնաւ չստիպեցին որ թլփատուի ինծի ընկերացող Տիտոսը, որ հեթանոսութենէ կու գար: Թլփատութիւն պահանջողները քանի մը կեղծ քրիստոնեաներ էին, որոնք հաւատացեալներու շարքերուն մէջ սպրդած էին՝ Յիսուս Քրիստոսով մեր ունեցած ազատութիւնը լրտեսելու եւ մեզ Մովսիսական օրէնքներու ծառայութեան մէջ պահելու համար: Բայց վայրկեան մը իսկ տեղի չտուինք անոնց, որպէսզի վստահ ըլլաք թէ ճշմարիտ էր ինչ որ ձեզի քարոզեցինք:

Գալով անոնց որոնք եկեղեցւոյ ղեկավարները կը համարուէին, ինծի համար բնաւ կարեւորութիւն չունի թէ անցեալին ի՛նչ եղած են անոնք: Աստուած մարդոց միջեւ խտրութիւն չի դներ:

Աստուած մարդոց միջեւ խտրութիւն չի դներ:

Արդ, ղեկավար համարուած այդ առաքեալները ոեւէ նոր բան չըսին ինծի այդ մասին: Ընդհակառակը, երբ տեսան թէ Աստուած ինծի վստահած է հեթանոսներու քարոզութիւնը - որովհետեւ Աստուած ինչպէս Պետրոսի առաքելութիւնը յաջողցուց հրեաներուն մէջ,

նոյնպէս ալ իմ առաքելութիւնս յաջողցուց հեթանոսներուն մէջ - , այն ատեն Յակոբոս, Կեփաս եւ Յովհաննէս, որոնք եկեղեցւոյ սիւները կը համարուէին, ճանչցան Աստուծոյ ինծի տրուած շնորհքը, իմ եւ Բառնաբասի ձեռքը թօթուելով հաւանութիւն տուին որ մենք հեթանոսներուն մէջ աշխատինք, իսկ իրենք՝ հրեաներուն: Միայն խնդրեցին որ Երուսաղէմի աղքատներուն օգնել չմոռնանք. բան մը, որուն համար ես սրտանց աշխատեցայ:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ  
(12.35-44)**

Յիսուս տաճարին մէջ ուսուցանելու ընթացքին հարցուց ժողովուրդին. «Օրէնքի ուսուցիչները ինչպէ՞ս կրնան ըսել թէ Քրիստոս, խոստացուած Փրկիչը, Դաւիթի սերունդէն է, երբ Դաւիթ ինք Սուրբ Հոգիով ներշնչուած կ'ըսէ.

“Տէրը ըսաւ իմ Տիրոջս.-

աչ կողմս նստէ,

մինչեւ թշնամիներդ ոտքերուդ տակ դնեմ որպէս պատուանդան”:

«Եթէ Դաւիթ զայն Տէր կը կոչէ, ինչպէ՞ս ուրեմն Քրիստոս անոր որդին է»:

Ժողովուրդը հաճոյքով մտիկ կ'ընէր Յիսուսի, որ իր ուսուցումները շարունակելով կ'ըսէր. «Զգո՛յ՛շ եղէք օրէնքի ուսուցիչներէն որոնք կը սիրեն փառաւոր զգեստներով շքեղ, հրապարակներու վրայ մարդոցմէ յարգալիր բարեւներ ընդունիլ, ժողովարաններու մէջ առաջին աթոռները գրաւել եւ ընթրիքներու ընթացքին՝ պատուոյ տեղերը: Մէկ կողմէ այրիներուն տունները անոնց ձեռքէն կը յափշտակեն, իսկ միւս կողմէ կեղծաւորութեամբ իրենց աղօթքը կ'երկարեն: Ասոր համար աւելի խիստ դատապարտութիւն պիտի ընդունին»:

Յիսուս կեցած էր տաճարի գանձանակին մօտ եւ կը դիտէր ժողովուրդը, որ դրամ կը նետէր գանձանակին մէջ: Շատ մը հարուստներ մեծ գումարներ նետեցին: Աղքատ այրի մըն ալ եկաւ եւ նետեց երկու լումայ, որ հինգ դահեկան կ'ընէ: Յիսուս մօտը կանչեց իր աշակերտները եւ ըսաւ անոնց. «Վստա՛հ գիտցէք, որ այս թշուառ այրին բոլորէն շատ դրամ նետած եղաւ գանձանակին մէջ, որովհետեւ միւսները իրենց աւելորդ գումարներէն նետեցին, մինչ անկա, հակառակ չքաւոր ըլլալուն, ինչ որ ունէր՝ նետեց, իր ամբողջ ապրուստը»:

**ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ  
ՁԵՐ ԱՌՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՄԵՆԵՐ  
ԱՆԽՕՐՕՔ ԿԱՏԱՐԵՅԷԷ ԿԱՊՈՒԷԼՈՎ  
ԵԿԵՂԵՅՈՅ ԴԻԿԱՆԱՏՈՒՆ՝  
514 331 5445 x202 ԹԻԻՆ**

**ՍՈՅՆ ԹԵՐԹԻՎՈՒ  
ՇԱՔԱԹԱԿԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹԵԱՄ  
Ե-ԱՆԱՔԿՈՎ ԱՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՐԵՅԷ  
eglise@sourphagop.net Ե-ՀԱՅԵՒՆ:**

**ՄՅԱՏԵՏՐԻ ԷՁՐ  
ԵՒ ՁԵՐ ՀԱԽԱՆՈՒԹԻՒՆ ԵՎ ՍԵՆՏԵՐ  
(like).  
[www.facebook.com/SourpHagopChurchMontreal](http://www.facebook.com/SourpHagopChurchMontreal)**

**ՄՅԱՏԵՏԷՐ  
Ս. ՅԱԿՈՒ ԱՌԱՋԱՌՈՒԿԱՆԻՍ ՄԱՅՐ  
ԵԿԵՂԵՅՈՅ ԿԱՔԷՁՐ՝  
[www.sourphagop.net](http://www.sourphagop.net)**

**ՄՅԱՏԵՏԷՐ  
Ս. ՅԱԿՈՒ ԱՌԱՋԱՌՈՒԿԱՆԻՍ ՄԱՅՐ  
ԵԿԵՂԵՅՈՅ YouTube ԿԱՅԱՆ՝  
ՓԱՏՈՒԼՈՎ  
Sourp Hagop Armenian Church**